Կարգապահական գործ թիվ ԿԳ-15031

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 211-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/129-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼՎԻՆԱ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետնա՝ Պալատ)** խորհուրդ **(այսուհետնա՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Ալվինա Չիլինգարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատիգլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ-ին Պալատի Նախագահին ներկայացրել է տեղեկանք, այնմասին, որ փաստաբան Ալվինա Չիլինգարյանը (արտոնագիրթիվ 131) 2014թ. մարտիցմինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 70.000 (յոթանասունհազար) ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 01.06.2015թ.թիվ 116-Ա/ԿԳ-15031 որոշմամբ փաստաբան Ալվինա Չիլինգարյանի (արտոնագիրթիվ 131) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015թ վականի սեպտեմբերի 28-ին ժամը 20:04-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում(ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողիհամառոտբացատրությունը.</u>**

Խորհրդի նիստի օրվա և ժամի մասին ծանուցվել է Ալվինա Չիլինգարյանը:

4. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Փաստաբան Ալվինա Չիլինգարյանը ունի 70.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն 2014թ. մարտից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար (նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. Պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով)
2) ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդի 08.07.2015թ. թիվ 18/4-Ա որոշմամբ փաստաբան Ալվինա Չիլինգարյանի փաստաբանական գործունեության թիվ 131 արտոնագրի գործողությունը դադարեցվել է (նշված փաստը հաստատվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի խորհրդական ԻրինաՓիլոյանի 09.07.2015թ-ի գրությամբ և Պալատի խորհրդի 08.07.2015թ. թիվ 18/4-Ա որոշմամբ):

5. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Պալատի խորհուրդը քննության առնելով կարգապահական գործում առկա ապացույցները գտնում է, որ Ալվինա Չիլինգարյանի նկատմամբ կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀօրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն. «Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀօրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ալվինա Չիլինգարյանի նկատմամբ «Փաստաբանությանմասին» ՀՀօրենքի 39.8 հոդվածի 1-ին մաի 4-րդ կետի հիմքով՝ կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկելու Ալվինա Չիլինգարյանին:

<u>Ծանոթություն՝</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում:Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ **Լիպարիտ Սիմոնյան**